

ԱՆՈՆԲ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԿՈՆԱԿ ԴԱՐՁՈՒՑԱԾ ՉԵՆ

Posted on December 7, 2020 by Keghart



Category: [Opinions](#)



Յակոբ Չոլաքեան, Երեւան, Օգոստոս 2020

Դոկտ. Յակոբ Չոլաքեան ծնած է Սուրիա, Քեսապ: Ծրջանաւարտ է Երեւանի Պետ. Համալսարանի Բանասիրութեան բաժնէն: Ան հմուտ մանկավարժ է, բարբառագետ, ազգագրագետ ու սիրուած ուսուցիչ: Հեղինակ է բազմաթիւ բարբառագիտական եւ ազգագրական գիրքերու եւ ուսումնասիրութիւններու, որոնք յատկապէս կ'առնչուին հայրենի Քեսապի եւ շրջակայ հայկական գիւղերու հետ: Վերջին տարիներուն ան հաստատուած է Երեւան եւ կը վարէ դասախօսի պաշտօն:



Սոյն յօդուածը գրուած էր Օգոստոսին, բայց Սեպտեմբեր ամսուն Արցախի վրայ կատարուած թուրքաէյճանական նախայարձակումին հետեւանքով չհրատարակուեցաւ մեր թերթին մէջ: Այժմ ճիշտ ատենն է ընթերցողներուն ուշադրութեան յանձնել զայն, որովհետեւ յոյժ այժմեական են հոն արտայայտուած գաղափարները: Պատերազմի դադրեցումէն ետք տիրող անորոշութեան, հիասթափութեան եւ անվստահութեան պայմանները կրնան խիստ բացասական անդրադարձ ունենալ Արցախի եւ սահմանամերձ հայրութեան վրայ: Հետեւաբար, փոխանակ արժողակողի եւ գիրար մեղադրելու, հայրենի մեր քաղաքական գործիչները, մտաւորականութիւնն ու հասարակայնութիւնը իրենց ուժերը պէտք է կեդրոնացնեն Արցախի եւ Հայաստանի վերաբնակեցման վրայ: Խմբ.

Իսկապէս, ըսել ու լսել պէտք չէ, որ Հայրենիքը տարանցիկ կայան եղաւ հայրենիք եկած սուրիահայերուն եւ ատկէ առաջ՝ իրաքահայերուն համար: Վաղը, թերեւս, նոյնը ըլլայ լիբանանահայերուն համար: Գէշը այն չէ, որ հայրենիքը տարանցիկ ճամբայ եղած է անոնց համար, ատիկա նոյնիսկ առաւելութիւն մըն է հայրենիքին եւ առանձնաշնորհում մը՝ տեղափոխուող մեր հայրենակիցներուն համար: Գէշը հեռացողներուն ուղղուած բացայայտ թէ թաքուն մեղադրանքն է:

Շատեր եկան եւ հեռացան, որովհետեւ այստեղ չկրցան իրենց գոյութիւնը պահպանել, ընտանիք պահել, չկրցան այստեղ ապրիլ: Շատերը կը ճանչնամ անունով մականունով,

կը ճանչնամ ընտանիքի անդամներով, իմացական կարողություններով, ազգային ըմբռնումներով, նիւթական տնտեսական վիճակով: Հայրենադարձութեան բոլոր քարոզները, կոչերը, հրաւերները փուճ են, երբ հայրենադարձողներու մնալու հնարաւորութիւններն ու միջոցները սակաւ են կամ հայրենադարձներով զբաղելու քու միջոցներդ անբաւարար են: Ոչ միայն նորեկները կը վերադառնան, բնիկներն ալ կը հեռանան: Հացի խնդիր է: Արդէն մոռցանք Դից Մայրի անունով մկրտուած ու երբեք չապրած գիւղի մը պատմութիւնը: Արդէն մոռցանք, որ Դեպի Երկիր նշանախօսք մը կար: Մարդիկ հայրենիքի մէջ աղքատ մնալ ու բեռ ըլլալ չուզեցին, անկախ անկէ, որ այդ բեռը շալկող ալ չկար: “Ինտեգրման” եւ “ադապտացիայի” քու մեկնութիւններդ սանդի մէջ ջուր ծեծել է, պարապ տակառի աղմուկ: Մարդու արժանապատուօրէն ապրելու իրաւունքը մարդու ամենասուրբ արժանապատուութիւնն է: Ինչ կրնային ընել, երբ այստեղ չկրցան երկու ոտքի վրայ մնալ: Դուք ամեն նախկին ուսուցիչէ, պաշտօնէսէ, արհեստաւորէ, այս կամ այն մասնագիտութեան տեր մարդէ ու գործարարէ չէք կրնար ակնկալել, որ անպայման հոս յաջողի կամ կեանքի ընթացքը փոխէ՝ ասպարէզը, գործը, արհեստը...: Գիտեմ, թէ ոմանք ինչպէս դուռէ դուռ կ’իյնային գործ մը հայթայթելու համար, թերեւս ալ երկու կամ երեք տեղ նոյնիսկ վազելու տրամադրութեամբ, որպէսզի այստեղ գոյատեւելու չափ միջոց ունենային...: Տարի մը, երկու դիմացան, թերեւս անելի, շատեր կը շարունակեն մնալու եւ չհեռանալու կիրքով սեղմուիլ ...:

Յետո՞յ...

Գացին: Լաւ ըրին:

Որովհետեւ նախ՝ տարտղնուած ու ցրուած ընտանիքները հիւրընկալ երկիրներու մէջ մեկտեղուեցան, գործ, տուն-տեղ ունենալու արագ միջոցներ հայթայթեցին կամ իրենց տրամադրուեցան: Սկսան ապրիլ: Շունչ քաշեցին այս երկար ու լլկիչ ողիսականներէն ետք: Ինչ գէշ բան կայ ասոր մէջ: Խնդրեմ, հին ու նոր ընտանիքները համայնքային շրջագիծին մէջ ամբողջացան, իրարմով թարմացան, զօրացան, եկեղեցիով, ակումբով, միութիւններով, հայկական դպրոցներով պայմանաւորուած՝ պահպանեցին ու կը շարունակեն պահպանել մշակութային ժառանգութեան յարատեւութիւնը, բան մը, որ հայրենիքի մէջ “ինտեգրման” եւ “ադապտացիայի” գլաններու տակ առհասարակ նիւթ ալ չդարձաւ...: Ատիկա ուրիշ ցաւ է:

Ակամայ կը յիշեմ մեծն Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վէպին չնահանջել փորձող վերջին հերոսը՝ Լոխումը, որ տեսնելով Փարիզի ուժացման ու այլասերման պայմանները՝ կ’ուզէ Հայաստան ներգաղթել. «Ռուսական դեսպանատունն է գացեր Լոխում, պահանջելով, որ Հայաստան երթալու համար իրեն անցագիր տան: Մերժեր են: Ըսեր է, թէ կ’ուզէ իր հայրենիքը ապրիլ. մերժեր են: Ըսեր է, թէ կ’ուզէ ճահիճներու չորացումին եւ ջրանցքներու բացումին համար իր բազուկները տանիլ. մերժեր են: Ըսեր է նոյնիսկ, թէ կ’ուզէ Արարատը տեսնել ու շնչել զայն. նորէն մերժեր են»:

Լոխում այս անգամ դիմեր է սարսափեցիլիորեն անհավանականին, բայց մարդկայնորեն ամենէն տրամաբանականին, վերադառնալ իր արմատներուն. «Այս անգամ վազեր է թրքական հիւպատոսարան: Մահիկաւոր դրօշը, անոնց գիրերը եւ թուրք գլուխները տեսնելով բոլորովին կատղեր է. պահանջեր է, որ անմիջապէս, անմիջապէս անցագիր տան իրեն... թէ մայրը մահամերձ է, պիտի մեռնի, թէ ինքն ալ հիւանդ է, ջղային նոպաներ ունի, թէ պէտք չէ, որ իր ապագան խորտակեն. իր տեղը հոս «Ֆաբրիկա»ներուն մէջը չէ, թէ պէտք չէ, որ... Սկսեր է հայիոյել, ոռնալ, անիծել: Ստիպուէր են քանի մը հոգի մէկէն վրան իյնալ զինքը դուրս կարենալ նետելու համար»:

Այո՛, Լոխումը պիտի հարցնէ. «Ո՞վ եմ ես, ի՞նչ եմ, ո՞ր պետութիւնը պիտի զբաղի ինձմով, մեզմով»:

Հիմա համաշխարհայնացումի մեր օրերուն՝ հայը աւելի աշխարհաքաղաքացի է, քան 20-ական թուականները, այսինքն այդ տազնապները հիմա նոյն ծանրութեամբ չեն ընկերանար անոր. օտար երկիր, օտար մշակութային միջավայր, օտար լեզու եւ բազում այլ օտարոտի երեւոյթներ հայ մարդը կը դիտէ հաշտ կերպով, կը դարձնէ ճամբու ընկեր, առանց իր ինքնութենէն հրաժարելու: Բոլորին մէջ մէկ մագնիսական դաշտ կայ՝ ՀԱՅՐԵՆԻՔԸ, անով կ'ապրի, անոր համար կ'աշխատի, անոր վերելքին համար իր կարելին կ'ընէ: Հայրենիքին ոչ ոք թիկունք դարձուցած է, պայմանով որ շարունակէ վստահիլ ու կառչած մնալ իր եկեղեցական, կրթական եւ միութենական կառոյցներուն, որպէսզի դիմանալ կարողանայ:

Չի բաւեր ունենալ հայրենիք, որուն տերը օտար է, չի բաւեր ունենալ սեփական պետութիւն, որ անզօր է, ատոր համար ալ գացողներուն եւ մնացողներուն մեծագոյն ճիգը հայրենիքի պետականութեան հզօրացումն է կամ պէտք է ըլլայ: Առանց հզօր հայրենիքի՝ չի կրնար հայրենադարձութիւն ըլլալ:

Նկարը՝ Թերի Ճոհնսթոնի (Terry Johnstone) «Յեղախումբերը կը ճամբորդեն» (Tribes Travel), Աւստրալիա.

There are no comments yet.